

**ԱՐՅԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱՄԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՍՊԵЦԻԱԼԻՍՏԻ ԶՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՆՑ**  
**ՅԱԿԱՎԱԾ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԻՆՈՒՄՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ**

1(25) 2012

**ՀՏԴ 575**

**Գիմետիկա**

**ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԳԻՆԵՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԽԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ  
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԻՆՈՒՄՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ**

**Ա. Ն. Թորոսյան**

Ստեղծագործական քաղաքի բնակչության շրջանում հետազոտություններ են կատարվել պարզելու ամուսնության բժշկագեննետիկական խնդիրները: Ցանկալի է, որ կամովին ամուսնական գոյց կազմող անձիք հաշվի առնեն իրենց սերմում հնարավոր այս կամ այն ժառանգական հիվանդությունների դրսերումը, առավել ևս այն գոյգերը, որոնց միջև կան որոշակի ազգակցական կապեր, նախքան ամուսնանալը դիմեն բժշկագեննետիկական կոնսուլտացիաներ՝ ժառանգական այլովիճակների անցկացման համար:

Ժառանգական հիվանդությունները քազմական են և քազմաբնույթ, սակայն նրանց առաջացման և զարգացման գործընթացն ունի բնդիմանուր մեխանիզմներ, որոնցից մեկը՝ կենսաքիմիական ռեակցիաների վրա գեների, հետևապես նաև ֆերմենտների վերահսկողության խանգարումն է, որը կապված է նաև միջավայրի փոփոխության հետ, մյուսը՝ ռեցեսիվ գեների կուտակումը [1, էջ 128, 3, էջ 230-231]:

Մարդկային պոպուլյացիաներում ժառանգական հիվանդությունների հաճախականությունը և տարածվածությունը մեծ չափով կախված է նաև ամուսնության համակարգից: Գոյություն ունի ժառանգականության ցուցանիշ հասկացությունը, որը ցույց է տալիս զավակների մոտ այն հայտնի գեները, որոնք ստացել են իրենց ծնողներից և մյուս նախնիներից: Յուրաքանչյուր սերնդի գենոտիպում նախնիների գեների առկայությունը կախված է ամուսնության համակարգի ձևից, որը դիտվում է շարունակաբար՝ սերնդներունդ [3, էջ 230-231]:

Եթե ամուսնական գոյգերի միջև գոյություն ունի մոտ ազգակցականություն, ապա այդ դեպքում ռեցեսիվ գեների դրսերում առավել մեծ հավանականություն է ստեղծվում:

Մեր կողմից 2009-2011 թթ. հետազոտություններ է կատարվել Ստեղծագործական շրջանում, վերականգնողական կենտրոնում, խոլ-համրերի միությունում, հանրապետական ծննդատանը և մանկական պոլիկլինիկայում:

Կատարված հետազոտություններն ուղղված են այն բանին, որ կամովին ամուսնական գոյց կազմող անձինք հաշվի առնեն իրենց սերմում հնարավոր այս կամ այն ժառանգական հիվանդությունների դրսերումը, և հնարավորինս կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկեն: Իսկ այդ միջոցառումը պարզապես ազգակցական կապերով ամուսնությունից հրաժարվելն է:

Բնակչության շրջանում ուսումնասիրվել է մի բնտաճիք, որտեղ ամուսները երկու նորոր երեխաներ են: Այդ ընտաճիքում ծնվել է խոլ և համր երեխա: Հաշվելով հոմոզիգոնության աստիճանը ըստ Ռայտի բանաձևի [3]

$$F = \sum \left(\frac{1}{2}\right)^{n_1+n_{2+1}} \times (1 + fa)$$

ստացել ենք  $F = \left(\frac{1}{2}\right)^{3+3-1} \times 1 = \frac{1}{32}$ : Բայց քանի որ նոյնը ստացվում է նաև մյուս ընդհանուր նախնու՝ մեծ տատիկի գծով, հետևաբար հոմոզիգոնության ընդհանուր գործակիցը կազմում է՝  $F = \frac{1}{32} + \frac{1}{32} = 0,0625 = 6,25\%$ : Այսինքն, այդ երեխայի մոտ հավանական է, որ 6,25% գեներ առավել են հոմոզիգոն վիճակի: Հավանական է, որ եթե ամուսնական գոյցը ազգականներ չլինեն, ապա նրանք չեն ունենան նման պաթոլոգիայով սերունդ: Ուստի մոտ ազգակից ծնողները պետք է հաշվի առնեն իրենց

սերնդում այս կամ այն ժառանգական հիվանդության ի հայտ գալը, առավել ևս, եթեն նրանց առաջին երեսան ունի դրա հետ կապված որևէ խնդիր:

Վերականգնողական կենտրոնում ծանոթանալով մի ամուսնական զույգի հետ, որոնք ունեին թերթ կարգի հոգեկան խանգարումներ, պարզվեց, որ նրանց երկու երեսանները ևս ունեն զարգացման ցածր մակարդակ՝ իրենց հասակակիցների համեմատ: Եթե այդ երեսանները հետազայում ամուսնանան առողջ մարդկանց հետ, հնարավոր է, որ նրանց սերունդը ևս հիվանդ լինի: Ցանկալի է, որ նման կարգի մարդկանց արգելվի ամուսնական զույգ կազմությունը կամ սերունդ ունենալը:

Հետազոտություններ են կատարվել նաև խոլ-համրերի կենտրոնում: Պարզվել է, որ այդ կենտրոնի խոլ-համրերը հիմնականում ամուսնացած են իրենց նմանների հետ:

Խոլ-համրերի միջև ամուսնությունը համարվում է դրական ասորտատիվ (ընտրողական) ամուսնություն: Որոշակի գենետիկական առանձնահատկություններով առանձնյակները ճգոտում են զույգ կազմությունը իրենց նմանների հետ, այլ ոչ թե ում հետ պատահի: Օրինակ՝ նոյն հասակի մտավոր զարգացվածությամբ նմանատիպ հատկանիշներով օժտված խոլ-համրերը հաճախ ամուսնություն են իրար հետ:

Ուսումնասիրելով կենտրոնի ամուսնական զույգներին, պարզվել է, որ կան հիվանդներ, որոնց մոտ կա միայն խոլություն կամ նրանք միայն համր են: Կա նաև մի այնպիսի ընտանիք, որտեղ ծնողները խոլ և համր են, բայց նրանց երեսանները միանգամայն առողջ են: Ծնողների մոտ այդ հիվանդությունը ճնշում է բերվել կյանքի ընթացքում, դրա համար են երեսանները առողջ են:

Հետազոտություններ են կատարվել նաև հանարավետական ծննդատանը: Բժիշկ-մանկաբարձի ասելով հիմների կոնսուլտացիաների ընթացքում անհրաժեշտության դեպքում մանրակրկիտ հետազատում են հոլի կանանց և նրանց ամուսինների ազգում որևէ ժառանգական հիվանդության դրսորումը, ամուսինների հարազատությունը և այլն:

2009-2011 թթ. մանակական պոլիկլինիկայում հետազոտությունների վիճակագրական տվյալների համաձայն զրանցված են Դատունի սինդրոմով մինչև 14 տարեկան 6 երեսա: Դատունի հիվանդությունը նորածինների մոտ հանդիպում է 1/500-1/700 հաճախականությամբ: Կնոջ տարիքի մեծացման հետ ուղիղ համեմատական ձևով մեծանում է նման երեսանների ծնվելու հավանականությունը:

Ուսումնասիրելով ամուսնության բժշկագենետիկական հիմնահարցները պարզվել է, որ բարեկամական կապներ ունեցող քաղաքացիների ամուսնության փաստը մեր հանրապետությունում լուրջ ուշադրության չի արժանանում, համապատասխան մարմինների կողմից չեն տարփում ազգակցական ամուսնությունների վիճակագրական հաշվառում, չկան բժշկագենետիկական կոնսուլտացիաներ, որտեղ բնակչությանը կտնիկացվի նման ամուսնությունների բացասական հետևանքների մասին, ինչպես նաև չեն կատարվում գենետիկական անալիզներ:

Գտնում ենք, որ ԼՂՀ-ում նման հետազոտությունները կարող են ունենալ կարևոր կենսական և սոցիալական նշանակություն: Ցանկալի է, որ կամովին ամուսնական զույգ կազմող անձինք հաշվի առնեն իրենց սերունդում հնարավոր այս կամ այն ժառանգական հիվանդությունների դրսորումը, առավել ևս ամուսնական զույգները, որոնց միջև կան մոտ ազգակցական կապներ, դիմեն բժշկագենետիկական կոնսուլտացիաներ ժառանգական պրոֆիլակտիկայի անցկացման համար:

### Գրականություն

1. Ենգիբարյան Ա.Ա., Բժշկական կենսաբանություն և գենետիկա, Երևան, 2000, էջ 128:
2. Զորանյան Վ.Ա., Նազարեթյան Ս.Մ., Գյուղատնտեսական կենդանիների գենետիկա և կենսատեխնոլոգիայի հիմունքներ, Երևան, 1988, էջ 283-289:
3. Սիսակյան Ս.Հ., Ընդհանուր և բժշկական կենսաբանություն, Երևան; 2007, էջ 230-231:
4. Սլյուսարև Ս.Ա., Կենսաբանություն և ընդհանուր գենետիկա, Երևան, “Լույս”, 1983, էջ 276-279:
5. Դубinin H.P., Общая генетика, М., 1976 с. 56-59.

Медикогенетические задачи брака и связанные с ними проявления наследственных заболеваний

А.А.Торосян

Резюме

Среди населения города Степанакерта провелись исследования, чтобы определить медикогенетические задачи брака. Желательно, чтобы личности, которые составляют добровольную супружескую пару, принимали во внимание возможные те или иные проявления наследственных

заболеваний в поколении. Больше всех для проведения профилактики в медикогенетическую консультацию обратились те супружеские пары, среди которых имеются близкие родственные связи.

## Medicogenetic problems of marriage and manifestations of hereditary diseases related to them

A.A.Torosyan

*Summary*

Studies were carried out among the population of Stepanakert to determine the medicogenetic problems of marriage. It is desirable for married couples voluntarily to take into account specific manifestations of possible hereditary diseases of their generations. Especially most of those couples among whom there are close family ties appeal to the medicogenetic consultation for prevention.

### ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԿՄՆԱԿԱՆ ՎԵՆՍԱՋԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1(25) 2012

ՀՏԴ 577.1+612

Ղենսարիմիա, ֆիզիոլոգիա

### ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԿՄՆԱԿԱՆ ՎԵՆՍԱՋԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ա. Լ. Գրիգորյան, Հ. Գ. Գալստյան

Աշխատանքը նվիրված է բժկակենսաբանական կարևորագույն հիմնահարցներից մեջին՝ սպիտակուցային փոխանակության խանգարումները բնութագրող արյան որոշ կենսարիմիական ցուցանիշների (ընդհանուր սպիտակուցի, կրնատինինի և միզանյոթի) ուսումնասիրությանը: Ներկայացված են Ստեփանակերտ քաղաքի նրկու ստատուն տարիքի բնակչների տվյալների վերլուծության արդյունքները: Ուսումնասիրված են նաև երիկամային անբավարարությանը բնորոշ մեջի հիմնական կենսարիմիական ցուցանիշները:

Սպիտակուցների դերը մարդու կյանքում անգնահատելի է: Դրա վառ ապացույցն այն է, որ նրանք քանակությամբ և կատարած զործառությամբ զերակշուում են մնացած կենսապոլիմերներին: Նրանց հետ են կապված օրգանիզմի կառուցվածքային բաղադրիչների աճի, ինքնանորացման, բջջային մենահատուկ սպիտակուցների վերականգման զործընթացները, ֆերմենտների, սպիտակուցային և պեպտիդային բնույթի հորմոնների, իմունոլոբուլինների, հեմոգլոբինի բնկալչական սպիտակուցների սինթեզը: Սպիտակուցներն ապահովում են ջրի փոխանակությունն արյան և հյուսվածքների միջև, արյան կախույթային փիճակը, մածուցիկությունը և թթվահիմնային հավասարակշռությունը: Սպիտակուցները համարվում են հորմոնների, հանքային նյութերի, լիպիդների, լողնատերինի փոխադրիչներ, նրանք ապահովում են մկանների կծկումները և ունեն էներգիական նշանակություն: Սպիտակուցները մտնում են բոլոր կենդանական հեղուկների՝ արյան, թթի, ողնուղեղային հեղուկի, մեզի կազմության մեջ: Պլազմայում սպիտակուցների խտության տատանումները պայմանավորված են հիմնականում սպիտակուցի սինթեզի և յուրացման արագությամբ ու բախչման ծավալով [1, էջ 51, էջ 135]:

Հիվանդությունների զարգացումը հիմնականում կապված է օրգանիզմի քիմիական գործընթացների փոփոխությունների հետ, չնայած, որ նրանց առաջացման պատճառ հանդիսացող գործոնները տարբեր են (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, ժառանգական, իմունաբանական): Ժամանակակից կլինիկական բժշկության մեջ կիրառվում են կենսարիմիական բազմաթիվ ցուցանիշներ, որոնք օգնում են հիվանդի մասին ճշգրիտ տեղիկություններ ստանալու խնդրում [1, էջ 16, 5, էջ 50]: Նպատակահարմար է այդ ցուցանիշները լսմբավորել նյութափոխանակության ընդունված բաժանումների համաձայն: Սպիտակուցների փոխանակության ցուցանիշներից են. արյան շիճուկում՝ ընդհանուր սպիտակուցը, սպիտակուցի ֆրակցիաները, ֆիբրինոգենը, մնացորդային ազոտը, կրնատինինը, կրնատինը, միզանյոթը, միզաթթուն, ինդիկանը, ամինաթթունները, սպիտակուցի նրկաթը կապելու ընդունակությունը, իսկ մեզում՝ կրնատինինը, միզանյոթը, ինդիկանը, ընդհանուր սպիտակուցները և նրա ֆրակցիաները:

Ներկայացված աշխատանքի նպատակն է հանդիսացնել ուսումնասիրների և գնահատել հաստուն նրկու տարիքային շրջանների մարդկանց արյան պլազմայի ընդհանուր սպիտակուցի, կրնատինինի և միզանյոթի քանակական փոփոխությունները, քանի որ սպիտակուցային